


ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ.  
ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

ä ⁂ î ¶ ⁂ Ø Æ ° ð Æ î ⁂ ê ⁂ ð , Ü ° ð Æ Ü

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՕՐՈՒԱՅ  
ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ (5 ԱՊՐԻԼ 2009)



*Թարգմանեց՝*

ՄԱՇՏՈՑ ԿԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Ê Ø ´ ≈ ¶ ð à ô Â ° ≈ Û Î à Ô Ø Æ ò

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

**[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)**

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
Եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Ø³βi áó ì ³Ñ; Ô³¼³ñ»³Ý

**«Մեր յոյսը դրել ենք կենդանի Աստծոյ վրայ» (1Տմ 4, 10)**

**Թանկագին ընկերներ,**

մօտակայ Ծաղկազարդի Կիրակի օրը թեմական մակարդակով տօնելու ենք Երիտասարդների Համաշխարհային Քսանչորսերորդ Օրը: Մինչ նախապատրաստում ենք տարեկան այս տօնակատարմանը, Տիրոջ նկատմամբ վառ երախտագիտութեամբ մտաբերում եմ Հանդիպումը, որ տեղի ունեցաւ Սիդնէյում, անցած տարուայ Յուլիսին. դա մի անմոռանալի Հանդիպում էր, որի ընթացքում Սուրբ Հոգին նոր սլացք հաղորդեց ամբողջ աշխարհից հաւաքուած բազմահազար երիտասարդների կեանքին: Տօնական ուրախութիւնը եւ Հոգեւոր խանդավառութիւնը, որ զգացինք այդ օրերին, պերճախօս նշանը Հանդիսացան Քրիստոսի Հոգու ներկայութեան: Իսկ այժմ սկսել ենք մեր ընթացքը դէպի միջազգային յաջորդ հաւաքը, որ ծրագրուելու ենք 2011 թուականին, Մադրիդում, որի նշանաբանն են լինելու Պօղոս Առաքեալի խօսքերը. «Քրիստոսի մէջ արմատաւորուած ու հիմնուած, հաւատքի մէջ ամուր հաստատուած» (Հմմտ. Կղս 2, 7): Պատրաստուելով երիտասարդների համաշխարհային այդ ժամադրութեանը, կամենում ենք միասին մտորել, 2009 թուականին խորհրդածելով Պօղոս Առաքեալի հետեւեալ խօսքի շուրջ. «Մեր յոյսը դրել ենք կենդանի Աստծոյ վրայ» (1Տմ 4, 10), մինչ 2010 թուականին կը խորհրդածենք հարուստ երիտասարդի կողմից Յիսուսին ուղղուած հարցի շուրջ. «Բարի Վարդապետ, ի՞նչ պէտք է անեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ» (Մրկ 10, 17):

**Երիտասարդութիւնը. յոյսի տարիք**

Սիդնէյում մեր ուշադրութիւնը կենտրոնացրել էինք այն հարցերի վրայ, որոնք Սուրբ Հոգին այսօր ուղղում է հաւատացեալներին, եւ ի մասնաւորի՝ ձեզ, թանկագին երիտասարդներ: Եզրափակիչ Սուրբ Պատարագի ժամանակ ձեզ իմ յորդորն ուղղեցի, որպէսզի թոյլ տաք՝ որ Նա ձեւաւորի ձեզ, դառնալու համար աստուածային սիրոյ պատգամաբերները, ընդունակ՝ յոյսի ապագայ կերտելու ամբողջ մարդկութեան համար: Յոյսի խնդիրն, իսկապէս, մեր կեանքի կենտրոնում է, մեր՝ որպէս մարդկային էակներ, եւ կենտրոնում է մեր առաքելութեան, մեր՝ որպէս քրիստոնեաներ, յատկապէս մեր արդի դարաշրջանում: Բոլորս էլ զգում ենք յոյսի կարիքը, բայց ո՛չ թէ մի որեւէ յոյսի, այլ մի ամբապինդ ու վստահելի յոյսի, ինչպէս կամեցայ ընդգծել իմ «Յոյսով ենք փրկուել» Կոնդակում: Յատկապէս երիտասարդութիւնը ժամանակն է յոյսի, քանի որ իր հայեացքն ուղղուած է դէպի ապագան, բազմաթիւ ու բազմապիսի ակնկալիքներով: Երբ մարդ երիտասարդ է, սնուցում է գաղափարականներ, երազանքներ ու ծրագրեր: Երիտասարդութիւնը այն տարիքն է, երբ հասունանում են վճռական որոշումներ մնացած կեանքի համար: Եւ թերեւս սա է պատճառը, որ երիտասարդութիւնն է նաեւ այն տարիքը, երբ առաւել ուժգնութեամբ հրապարակ են դուրս գալիս հիմնական հարցադրումները. «Ինչո՞ւ գոյութիւն ունեմ», «Ի՞նչ իմաստ ունի կեանքը», «Ի՞նչ նպատակակէտի է ձգտում իմ կեանքը»: Եւ տակաւին. «Ինչպէ՞ս հասնել երջանկութեանը», «Ինչո՞ւ գոյութիւն ունեն տառապանքը, հիւանդութիւնն ու մահը», «Ի՞նչ կայ մահից անդին»: Սրանք հարցադրումներ են, որ կարող են նաեւ ճնշիչ դառնալ, երբ այդ հարցերն իր առաջ դնող ենթական յայտնուած է այնպիսի իրավիճակում, որ պէտք է ուժերը չափի այնպիսի խոչընդոտների հետ, որոնք երբեմն անյաղթահարելի են թւում. դժուարութիւններ ուսման մէջ, աշխատանքի բացակայութիւն, անհասկացողութիւններ ընտանիքում, ճգնաժամեր ընկերական յարաբերութիւններում կամ գոյգի միջեւ փոխըմբռնում ստեղծելու գործում, հիւանդութիւններ կամ անդամալուծութիւն, համապատասխան միջոցների պակաս՝ որպէս տնտեսական եւ հասարակական արդի եւ համատարած ճգնաժամի հետեւանք: Այդպիսի դէպքերում ինքներս մեզ հարցնում ենք. «Որտեղի՞ց քաղել եւ սեփական սրտում ինչպէ՞ս վառ պահել յոյսի բոցը»:

**«Մեծ յոյսի» փնտռուելը**

Փորձառութիւնը ցոյց է տալիս, որ անձնական ունակութիւնները եւ նիւթական բարիքները բաւական չեն ապահովելու համար այն յոյսը, որի տեւական փնտռուելի մէջ է մարդկային հոգին: Ինչպէս գրել եմ արդէն մէջբերուած «Յոյսով ենք փրկուել» Կոնդակում,

քաղաքականութիւնը, գիտութիւնը, գիտարուեստը, տնտեսութիւնը եւ նիւթական ուրիշ որեւէ միջոց միայնակա՛ն բաւարար չէ ընծայելու մարդուն այն մեծ յոյսը, որին բոլորս ձգտում ենք: Այդ յոյսը «կարող է լինել միմիայն Աստուած, որ ընդգրկում է ամբողջ տիեզերքը եւ կարող է պարգեւել մեզ այն՝ ինչին մենք միայնակ, միայն մեր ուժերով, չենք կարող հասնել» (Թիւ 31): Ահա թէ ինչո՞ւ աստուածամոռացութեան վատթար հետեւանքներից մէկը այն ակնյայտ մոլորութեանն է, որ մեծապէս տարածուած է մեր հասարակութիւններում եւ որի արդիւնքն են հոգեբանական միայնութիւնն ու բռնութիւնը, հիւանդագին անգոհունակութիւնն ու վստահութեան կորուստը, որոնք յաճախ տանում են մարդուն դէպի յուսահատութիւն: Յստակ եւ ուժգին է յորդորը, որ ստանում ենք Աստուածաշնչից. «Նզովեալ է մարդը, որն իր յոյսը դնում է մարդու վրայ եւ ապաւինում է մարմնին, իր սիրտը հեռացնելով Տիրոջից: Նմանուելու է անապատի մոշին, նրա մօտ բարիք չի գալու» (Եր 17, 5-6):

Յոյսի ճգնաժամը առաւել հեշտութեամբ հարուածում է նոր սերունդներին, որոնք հասարակական-մշակութային այնպիսի բանակարգում, որը զուրկ է ապահով գաղափարներից, արժէքներից եւ հոգեւոր-հոգեբանական ամուր յենակէտերից, յայտնուում են այնպիսի իրավիճակում, որ հարկադրում են դիմագրաւելու այնպիսի դժուարութիւններ, որոնք իրենց ուժերից գերազանց են թւում: Այս պահին մտածում եմ, թանկագին երիտասարդ ընկերներ, ձեր այն բազմաթիւ հասակակիցների մասին, որոնց կեանքը խոցուած է, սահմանափակուած է անձնական հասունութեան պակասով, որը յաճախ հետեւանքն է ընտանեկան կեանքում ապրուած դատարկութեան, դատարկների կողմից որդեգրուած ամէնաթող եւ սանձարձակ մեթոդների, ինչպէս նաեւ բացասական եւ հոգեբանական խնդիրներ առաջացնող փորձառութիւնների: Ոմանց համար – իսկ այդպիսիք, ցաւօք սրտի, քչերը չեն – գրեթէ միակ ելքը, որ տեսնում են՝ դուրս գալու համար այդ իրավիճակից, սեփական անձից ու միջավայրից օտարացնող փախուստն է դէպի վտանգաւոր եւ բռնի վարքն ու արարքները, դէպի թմրանիւթերից ու ոգելից խմիչքներից կախուածութիւնը, եւ դէպի երիտասարդական տագնապալի մոլորութեան միւս բոլոր բազմապիսի կերպերն ու ձեւերը: Եւ սակայն, նաեւ նրանց սրտում, ովքեր «չարամիտ ուսուցիչներին» խորհուրդներին հետեւած լինելու պատճառով յայտնուել են նման ցաւալի վիճակներում, չի մարում ճշմարիտ սիրոյ եւ իրական երջանկութեան փափաքը: Բայց ինչպէ՞ս աւետարանել յոյսը այդ երիտասարդներին: Մենք զիտենք, որ միմիայն Աստուծոյ մէջ է մարդկային էակը գտնում իր ճշմարիտ իրագործումը: Առաջնային պարտաւորութիւնն, ուստի, որ վերաբերում է մեզ բոլորիս, դա աւետարանական մի նոր քարոզչութիւնն է, որը նոր սերունդներին օգնի վերստին բացայայտելու Աստուծոյ իրական Դէմքը, Աստուծոյ՝ որ Աէր է: Ձեզ, թանկագին երիտասարդներ, որ փնտռում էք մի հաստատուն ու ամրապինդ յոյս, ուղղում եմ այն միեւնոյն խօսքերը, որոնք Պօղոս Առաքեալն ուղղում էր այն ժամանակուայ Հռոմում հալածուող քրիստոնէաներին. «Թող յոյսի Աստուածը լիացնի ձեզ, հաւատքի մէջ, ամենայն ուրախութեամբ եւ խաղաղութեամբ, որպէսզի Սուրբ Հոգու զօրութեամբ՝ դուք յոյսով առատանաք» (Հռմ 15, 13): Հեթանոսների Առաքեալին նուիրուած այս յոբելեանական տարուայ ընթացքում, մինչ տօնակատարում ենք իր ծննդեան երկուհազարամեակը, իրենից սովորենք դառնալ քրիստոնէական յոյսի հաւատալի վկաները:

### Պօղոս Առաքեալը. յոյսի վկայ

Բազմաթիւ ու բազմապիսի դժուարութիւններում ու նեղութիւններում գտնուելով, Պօղոս Առաքեալն իր հաւատարիմ աշակերտ Տիմոթէոսին գրում էր. «Մեր յոյսը դրել ենք կենդանի Աստուծոյ վրայ» (1Տմ 4, 10): Ինչպէ՞ս էր նրա հոգում ծնուել այդ յոյսը: Այս հարցին պատասխանելու համար պէտք է որպէս մեկնակէտ վերցնենք յարուցեալ Յիսուսի հետ ունեցած նրա հանդիպումը դէպի Դամասկոս տանող ճանապարհի վրայ: Այդ ժամանակ Սաւուղը ձեր նման մի երիտասարդ էր, մօտաւորապէս քսան կամ քսանհինգ տարեկան, մովսիսական Օրէնքի հետեւորդ, որ որոշել էր որեւէ միջոց գործի դնելով պայքարել նրանց դէմ, ում նա համարում էր Աստուծոյ թշնամիները (Հմմտ. Գրծ 9, 1): Մինչ Դամասկոս էր գնում ձերբակալելու համար Քրիստոսի հետեւորդներին, մի խորհրդաւոր լոյս շլացրեց նրան եւ լսեց՝ թէ ինչպէս էր ինչ որ մէկն իրեն անունով դիմում. «Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ ես հալածում ինձ»: Գետին ընկնելով հարցրեց. «Ո՞վ ես, Տէր»: Եւ այդ ձայնը պատասխանեց. «Ես Յիսուսն եմ, որին դու հալածում ես» (Հմմտ. Գրծ 9, 3-5): Այդ հանդիպումից յետոյ Պօղոսի կեանքն արմատապէս փոխուեց. ընդունեց Մկրտութիւնը եւ դարձաւ Աւետարանի Առաքեալ: Դէպի Դամասկոս տանող ճանապարհի վրայ նա ներքուստ կերպարանափոխուեց աստուածային Սիրոյ կողմից, որին հանդիպել էր յանձինս Յիսուս Քրիստոսի: Մի օր գրելու էր. «Այս կեանքը, որ ես ապրում եմ մարմնում, ես այն ապրում եմ

Աստծոյ Որդու հանդէպ հաւատքի մէջ, որը սիրեց ինձ եւ իրեն զոհաբերեց իմ համար» (Գղտ 2, 20): Հալածողից, ուստի, դարձաւ վկայ եւ առաքեալ. քրիստոնէական համայնքներ հիմնեց Փոքր Ասիայում եւ Յունաստանում, անցնելով հազարաւոր կիլիմետրեր եւ դիմադրաւելով ամէն տեսակ նեղութիւններ ու չարչարանքներ, մինչեւ որ մարտիրոսութեան ենթարկուեց Հռոմում: Ամէն բան յանուն Քրիստոսի սիրոյ:

### Մեծ յոյսը Քրիստոսի մէջ է

Պօղոս Առաքեալի համար յոյսը սոսկ մի գաղափար չէ կամ մի զգացում, այլ մի կենդանի անձ. Յիսուս Քրիստոսը, Աստծոյ Որդին: Այս համոզմունքը տիրում էր նրա հոգուն, այնպէս՝ որ կարողանում է գրել Տիմոթէոսին. «Մեր յոյսը դրել ենք կենդանի Աստծոյ վրայ» (1Տմ 4, 10): «Կենդանի Աստուածը» յարութիւն առած եւ աշխարհում ներկայ Քրիստոսն է: Նա ինքն է ճշմարիտ յոյսը. Քրիստոսը, որ ապրում է մեր հետ եւ մեր մէջ, եւ որ մեզ կանչում է մասնակցելու իր իսկ յաւիտենական կեանքին: Քանի որ միայնակ չենք, քանի որ Նա մեր հետ է, մասնաւանդ թէ՛ քանի որ Նա է մեր ներկան ու մեր ապագան, ուրեմն ինչո՞ւ կամ ինչի՞ց վախենալ: Քրիստոնեայի յոյսը, հետեւաբար, փափաքելն է «երկնային Արքայութիւնն ու յաւիտենական կեանքը որպէս մեր երջանկութիւն, մեր վստահութիւնը հաստատելով Քրիստոսի խոստումների մէջ եւ ապաւինելով ո՛չ թէ մեր ուժերին, այլ Սուրբ Հոգու շնորհի օգնութեանը» (ԿեՔ 1817):

### Դէպի մեծ յոյսը տանող ճանապարհը

Ինչպէս մի օր հանդիպեց երիտասարդ Պօղոսին, Յիսուս կամենում է հանդիպել նաեւ ձեզնից իւրաքանչիւրին, թանկագին երիտասարդներ: Այո՛, մեր փափաքը լինելուց առաջ, այդ հանդիպումը Քրիստոսի բուռն փափաքն է: Բայց ձեզնից ոմանք կարող են հարցնել ինձ. «Ինչպէ՞ս կարող եմ հանդիպել Նրան ես, այսօր»: Եւ կամ. «Ինչպէ՞ս եւ ի՞նչ ճանապարհով է Նա մօտենում ինձ»: Եկեղեցին մեզ ուսուցանում է, որ Տիրոջը հանդիպելու փափաքն արդէն շնորհի արդիւնքն է: Երբ աղօթքի ժամանակ արտայայտում ենք մեր հաւատքը, նաեւ մթութեան մէջ արդէն հանդիպում ենք Նրան, որովհետեւ Նա իրեն ընծայում է մեզ: Յարատեւ աղօթքի միջոցով սիրտը բացում է ընդունելու Նրան, ինչպէս բացատրում է Սուրբ Օգոստինոսը. «Աստուած, մեր Տէրը, կամենում է, որ աղօթքի մէջ հրահանգուի մեր փափաքը, այնպէս՝ որ ընդունակ դառնանք ստանալու այն՝ ինչ ինքը մտադիր է մեզ տալու» (Նամակ 130, 8, 17): Աղօթքը Սուրբ Հոգու պարգեւն է, որ մեզ դարձնում է յոյսի այրեր եւ յոյսի կանայք, իսկ աղօթելը աշխարհը բաց է պահում Աստծոյ առաջ (Կոնդակ «Յոյսով ենք փրկուել», 34):

Տեղ յատկացրէք աղօթքին ձեր կեանքում: Անձնական աղօթքներով մենակ աղօթելը լաւ է, բայց է՛լ աւելի գեղեցիկ եւ օգտակար է միասին աղօթելը, քանի որ Տէրը երաշխաւորել է, որ ներկայ է լինելու այնտեղ՝ ուր երկու կամ երեք հոգի հաւաքուել են իր անունով (Հմմտ. Մտթ 18, 20): Բազմաթիւ ու բազմապիսի ձեւեր կան Նրա հետ մտերիմ ընտանութիւն հաստատելու համար. գոյութիւն ունեն փորձառութիւններ, խմբեր եւ շարժումներ, հանդիպումներ եւ կրթական ծրագրեր՝ աղօթել սովորելու համար եւ այդպիսով աճելու հաւատքի փորձառութեան մէջ: Մասնակցեցէք ծիսակատարութիւններին ձեր ծխական համայնքներում եւ առատօրէն սնուցեցէք Աստծոյ Խօսքով եւ գործուն մասնակցութեամբ Խորհուրդներին: Ինչպէս գիտէք, քրիստոնեայ իւրաքանչիւր հաւատացեալի եւ իւրաքանչիւր համայնքի գոյութեան եւ առաքելութեան գազաթնակէտն ու կենտրոնն է Սուրբ Պատարագը, փրկութեան այդ խորհուրդը, որի մէջ Քրիստոս ներկայ է դառնում եւ որպէս հոգեւոր սնունդ պարգեւում է իր իսկ Մարմինն ու Արիւնը յաւիտենական կեանքի համար: Խորհուրդ յիւրաւի անճառելի: Սուրբ Պատարագի շուրջն է ծնւում եւ աճում Եկեղեցին, քրիստոնեաների մեծ ընտանիքը, որին անդամակցում ենք Մկրտութեամբ եւ շարունակաբար նորոգում ենք շնորհիւ Հաշտութեան խորհրդի: Մկրտուածներն, ապա, Դրոշմի շնորհիւ ամրապնդում ու հաստատում են Սուրբ Հոգու կողմից, որպէսզի կարողանան ապրել որպէս Քրիստոսի իրական մտերիմներն ու վկաները, մինչ Ձեռնադրութեան եւ Ամուսնութեան խորհուրդները նրանց ունակ են դարձնում իրագործելու իրենց առաքելական պարտաւորութիւնները Եկեղեցում եւ աշխարհում: Հիւանդաց Օծումն, ի վերջոյ, մեզ հնարաւորութիւն է ընձեռում վայելելու աստուածային սփոփանքն ու մխիթարութիւնը հիւանդութեան ու տառապանքի ժամանակ:

## Գործել քրիստոնեական յոյսի համաձայն

Եթէ ձեր հոգին սնուցում էք Քրիստոսով, թանկագին երիտասարդներ, եւ ապրում էք Նրա մէջ խորասուզուած, ինչպէս Պողոս Առաքեալը, չէք կարող չխօսել Նրա մասին եւ Նրան ճանաչել եւ սիրել չտալ ձեր բազմաթիւ ընկերներին ու հասակակիցներին: Դառնալով Նրա հաւատարիմ աշակերտները, այդպիսով ի վիճակի կը լինէք նպաստելու քրիստոնեայ համայնքների ձեւաւորմանը, համայնքներ, որոնք պէտք է ներծծուած լինեն փոխադարձ սիրով, ինչպէս այն առաջին քրիստոնեական համայնքները, որոնց մասին պատմում է Գործք Առաքելոց գիրքը: Եկեղեցին վստահութեամբ ապաւինում է նաեւ ձեր օգնութեանը այս պարտաւորիչ առաքելութեան գործում: Թող ձեզ չվհատեցնեն դժուարութիւններն ու նեղութիւնները, որոնց կարող էք հանդիպել ճանապարհին: Եղէք համբերատար ու յարատեւող, յաղթահարելով երիտասարդական բնական ձգտումը՝ շտապելու, աճապարելու, կամենալու ամէն բան եւ իսկոյն:

Թանկագին ընկերներ, Պողոս Առաքեալի նման՝ Յարուցեալի վկաները եղէք: Ծանօթացրէք Նրան բոլոր նրանց՝ ուղբեր – ձեր հասակակիցները լինեն, թէ մեծահասակ – փնտռում են «մեծ յոյսը», որը կարող է իմաստ հաղորդել իրենց կեանքին: Եթէ Յիսուս դարձել է ձեր յոյսը, այդ մասին պատմեցէք նաեւ ուրիշներին, պատմեցէք ձեր հոգեւոր ուրախութեամբ եւ ձեր առաքելական ու հասարակական գործունէութեամբ: Քրիստոսին ձեր մէջ բնակեցնելով, ձեր հաւատքը Նրա մէջ հաստատելով եւ Նրան ընծայելով ձեր ամբողջ վստահութիւնը, տարածեցէք այդ յոյսը բոլորին ձեր շուրջը: Կատարեցէք այնպիսի ընտրութիւններ, որոնք կը բացայայտեն ձեր հաւատքը: ցոյց տուէք, որ հասկացել էք դրամի, նիւթական բարիքների, պաշտօնապաշտութեան ու սոսկ նիւթական յաջողութիւնների կուսակաշտութեան դարանակալ նենգութիւնը, եւ մի՛ թողէք, որ ձեզ հրապուրեն նման խաբէական ուրուականները: Մի՛ յաղթուէք եսապաշտական շահի տրամաբանութիւնից, այլ ձեր հոգիներում սնուցէք սէրը մերձաւորի հանդէպ, եւ ջանացէք ձեր անձերը եւ ձեր մարդկային ու մասնագիտական կարողութիւնները ի սպաս դնել հասարակաց բարիքին եւ ճշմարտութեանը, միշտ պատրաստ լինելով պատասխանելու «բոլոր նրանց՝ ուղբեր ձեզնից հարցնում են պատճառն այն յոյսի, որ ձեզնում է» (1Պտ 3, 15): Իրական քրիստոնեան երբեք տխուր չէ, նոյնիսկ եթէ գտնուում է այնպիսի իրավիճակում, որ պէտք է դիմագրաւի բազմապիսի նեղութիւնների, որովհետեւ Յիսուսի ներկայութիւնն է իր բերկրանքի եւ իր խաղաղութեան գաղտնիքը:

## Մարիամը. Յոյսի Մայրը

Ձեր համար առաքելական կեանքի այս ուղեգծի բնօրինակ թող լինի Պողոս Առաքեալը, որն իր կեանքը սնուցեց յարատեւ հաւատքով ու յոյսով, հետեւելով Աբրահամի օրինակին, որի մասին գրում է Հռոմէացիներին ուղղուած իր Նամակում. «Նա հաւատաց, ամուր եւ հաստատուն մնալով յոյսի մէջ, թէ եւ անյուսութեան վիճակում էր, եւ այդպիսով դարձաւ հայրը բազում ժողովուրդների» (Հռմ 4, 18): Յոյսի ժողովրդի այս միեւնոյն հետքերին հետեւելով – յոյսի ժողովուրդը, որ կազմուած է բոլոր ժամանակների Մարգարէներից եւ Սրբերից – մենք շարունակում ենք յառաջ ընթանալ դէպի Արքայութեան իրագործումը, իսկ մեր հոգեւոր ուղեւորութեան ընթացքում մեզ ընկերակցում է Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածինը, Յոյսի Մայրը: Նա, որ իր մէջ մարմնաւորեց Իսրայէլի յոյսը, Նա, որ աշխարհին պարգեւեց Փրկիչը եւ կանգուն մնաց, յոյսի մէջ հաստատուն, Ուաչի ստորոտում, Նա մեր համար օրինակ է եւ նեցուկ: Բայց յատկապէս, Մարիամը բարեխօսում է մեր համար եւ մեր դժուարութիւնների խաւարի միջով առաջնորդում է մեզ դէպի Յարուցեալի հետ հանդիպման լուսափայլ այգեբացը: Այս պատգամս կ'ուզենայի աւարտել, թանկագին երիտասարդ ընկերներ, մէջբերելով Սուրբ Բեռնարդոսի գեղեցիկ եւ յայտնի յորդորներից մէկը, որ ներշնչուած է Մարիամի «Ծովի Աստղ» տիտղոսից. «Դու, որ ներկայ կեանքի շարունակական անկայունութեան մէջ տեսնում ես, թէ ինչպէս ես այս ու այն կողմ նետուում փոթորիկների մէջ, փոխանակ հաստատուն հողի վրայ քայլելու, հայեացքդ անբաժան սեւեռիւր այս աստղի շողարձակման վրայ, եթէ չես ուզում անհետ կորչել մրրիկի մէջ: Եթէ գլուխ ես բարձրացնում փորձութիւնների քամիները եւ ենթարկում ես վշտերի ժայռախութեան բախուելու վտանգին, նայի՛ր աստղին, կանչի՛ր Մարիամին: ... Վտանգների, նեղութիւնների, մտահոգութիւնների, երկմտանքների մէջ միտքդ Մարիամին ուղղիր, կանչի՛ր Մարիամին: ... Նրա օրինակին հետեւելով՝ չես մոլորուի, նրա օգնութիւնն աղերսագին հայցելով՝ յոյսդ չես կորցնի, նրա մասին մտածելով՝ սխալի մէջ չես ընկնի: Նրան քեզ որպէս նեցուկ ունենալով՝ չես սայթաքի, նրա պաշտպանութեան ներքոյ՝ ոչնչից չես վախենայ, նրա առաջնորդութեամբ՝ չես յոգնի, նրա պաշտպանութեամբ՝ կը հասնես նաւահանգիստ» (Կոյս Մօրն ուղղուած գովաբանական քարոզներ, 2, 17):

